



**MILLENNIUM CHALLENGE  
ACCOUNT - ARMENIA**  
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Միայն հաղորդագրություն

Հոկտեմբերի 13, 2009

**Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի երկօրյա ցուցահանդեսի միջոցով նշվում է ծրագրային երեք տարիների գործունեությունը**

*Երևան, Հայաստան.* հոկտեմբերի 13-ին և 14-ին յուրօրինակ ցուցահանդեսի միջոցով ներկայացվեցին Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանի (ՀՄՀ-Հայաստան) Ջրից դեպի Շուկա բաղադրիչի երեքամյա գործունեության արդյունքները: Ցուցահանդեսում ներկայացված էին ոռոգման, գյուղատնտեսական արտադրանքի և հետբերքահավաքային գործընթացների առաջավոր փորձն ու ժամանակակից տեխնոլոգիաները: Ցուցահանդեսի միջոցով նաև անդրադարձ էր կատարվում շուկայի հնարավորությունները բացահայտելու և դրանք ֆերմերներին ներկայացնելու ուղղությամբ ունեցած հաջողություններին:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչը: Արարողությունը սկսվեց տեսահոլովակի դիտումով, որից հետո բարձրաստիճան պաշտոնյաները հանդես եկան ելույթներով: Նրանք կարևորեցին այս հետաքրքիր իրադարձությունը և ծրագիրը ընդհանուր առմամբ, որը ԱՄՆ և Հայաստանի արդյունավետ համագործակցության գերազանց օրինակ է հանդիսանում:

Ցուցահանդեսի բազմաթիվ ցուցանմուշները, շնորհանդեսները և ցուցատախտակները ներկայացնում էին ՋրԾ բաղադրիչի նպատակները, այն է՝ բանիմաց և բարեկեցիկ ֆերմեր վերապատրաստման, գործնական կիրառման և ֆինանսական միջոցների մատչելիության շնորհիվ, աջակցություն գյուղատնտեսական արտադրության ամբողջ շղթային՝ կապ հաստատելով բարելավված ոռոգման և շահութաբեր ագրոբիզնեսների միջև: Ցուցահանդեսի երկու օրերի ընթացքում այցելուները նաև հնարավորություն ունեցան հանդիպելու ֆերմերներին, ծրագրի փորձագետներին, վարկային կազմակերպությունների ներկայացուցիչներին և քննարկել բազմաթիվ հարցեր, որոնք հավասարաչափ կարևոր են թե ֆերմերների, թե ագրոբիզնեսների ներկայացուցիչների և թե քաղաքականություն իրականացնողների համար:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի շուրջ 18 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ Ջրից դեպի շուկա բաղադրիչը հանդիսանում է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի կողմից ֆինանսավորվող գյուղատնտեսության աջակցության ծրագիր: Ծրագրի իրականացման ընթացքում 81,000 ֆերմեր կուսուցանվեն ջրի ներտնտեսային կառավարման և բարձրարժեք գյուղատնտեսության ոլորտներում Հայաստանի գրեթե 350 գյուղական համայնքներում: Կհիմնադրվեն ավելի քան 200 ցուցադրական տնտեսություններ, որոնց նպատակն է ներկայացնել ոռոգման նոր տեխնոլոգիաները և բարձրարժեք գյուղատնտեսության փորձը հանրապետության բոլոր մարզերում: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ կիրականացվեն հետբերքահավաքային տեխնոլոգիաների, վերամշակման և մարքեթինգի ոլորտում, որը կապահովի արդյունավետ համագործակցություն գյուղատնտեսական բարելավված արտադրության և ագրոբիզնեսի ձեռնարկությունների միջև: Մոտավորապես 8.5 միլիոն ԱՄՆ դոլար կտրամադրվի ՀՄՀ-Հայաստանի կողմից գյուղատնտեսության ոլորտի վարկերի համար: ՋրԾ բաղադրիչի ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան 32 միլիոն ԱՄՆ դոլար՝ հաշվի առնելով, որ վերջինիս ներքո իրականացվում է նաև Ոռոգման կազմակերպությունների կառուցվածքային ամրապնդում ենթաբաղադրիչը:

**Այս իրադարձության և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել**

[www.mca.am](http://www.mca.am)

Հագարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն է, որն հիմնվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ ժողովրդավարության և արդարության սկզբունքերով իրականացնելու Հագարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև ստորագրված համաձայնագիրը: